ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ, ԲՆԱԿԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 1-ին հանրակացարանի 26 բնակարանի (ներկայիս՝ 49 շենքի 39 բն.) բնակիչ Եղիա Մարտիրոսի Վարդանյան դիմում է ներկայացրել Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 11-ի «Համայնքային սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի N39 բնակարանն անհատույց Հերիքնազ Երեմյանի ընտանիքին օտարելու մասին» N20-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Հանձնաժողովը ուսումնասիրել է ներկայացված դիմումը և հիմք ընդունելով Եղիա Մարտիրոսի Վարդանյանի որդու՝ Մանուկ Եղիայի Վարդանյանի մահվան փաստն (մահվան վկայական՝ ԲԱ044051 տրված՝ 30.11.2018թ.) ու Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող 2-րդ փողոցի 49 շենքի 39 բնակարանի սեփականության վկայականի մեջ առկա բնակարանի մակերեսի չափի անհամապատասխանությունը՝ որոշման մեջ բնակարանի 13.58 քմ ընդհանուր մակերեսը պետք է լինի վկայականում գրանցված չափը՝ 13.62 քմ, առաջարկում է՝

Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 11-ի «Համայնքային սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի N39 բնակարանն անհատույց Հերիքնազ Երեմյանի ընտանիքին օտարելու մասին» N20-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ ընդհանուր բաժնային սեփականատերեր ճանաչել Եղիա Մարտիրոսի Վարդանյանին, Հերիքնազ Արամայիսի Երեմյանին և բնակարանի ընդհանուր մակերեսը փոփոխել 13.62քմ:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Միշա Եղիազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արգամ Շառյան

_____ Վոլոդյա Հայրապետյան

_____ Կարինե Բաղդասարյան

_____ Աննա Սահրատյան

Ծանոթացա առաջարկությանը, որի հետ համաձայն եմ՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«01» 12 2021 թ.